

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի 05.04.2017թ. թիվ 235 Լ/Կ հրամանի

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ԿԱՐԳ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 2 30.03.2017թ.

Վանաձոր

2017թ.

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Համալսարան) գիտական գործունեության համար ներհամալսարանական դրամաշնորհների տրամադրման կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են աշխատակիցների և սովորողների (ասպիրանտների, հայցորդների և մագիստրանտների) խմբերի կողմից իրականացվող գիտական գործունեության համար Համալսարանի միջոցներից ֆինանսավորվող դրամաշնորհների (այսուհետ՝ Դրամաշնորհներ) տրամադրման և այդ նպատակով մրցույթների անցկացման հետ կապված հարաբերությունները:
2. Կարգը սահմանում է Համալսարանի առանձին ստորաբաժանումների, գիտական խմբերի, սովորողների խմբերի, գիտահետազոտական նախագծերի ղեկավարների աշխատանքի հիմնական սկզբունքները և փոխհարաբերությունները համանման աշխատանքներ կատարելու ընթացքում, ինչպես նաև գիտահետազոտական նախագծերի պատվերների ձևակերպումը և պայմանագրերի կնքումը, ծախսերի պլանավորումը և կատարման հաշվետվությունը:
3. Կարգի իրավական հիմքերն են ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, Համալսարանի կանոնադրությունը:
4. Դրամաշնորհները Համալսարանի գիտական գործունեության ներքին ֆինանսավորման ձևերից են և միտված են Համալսարանի գիտական-հետազոտական գործունեության հետագա զարգացմանը, պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական որակի բարձրացմանը, գիտաուսումնական գործընթացում գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներդրմանը, գիտահետազոտական աշխատանքներում սովորողների ներգրավմանն ու գիտական փորձի կուտակմանը:
5. Գիտահետազոտական նախագիծը (այսուհետ՝ ԳՀՆ) մեկ կամ մի քանի ուղղությունների շրջանակներում գիտական և ուսումնական բնույթի հետազոտական համալիր աշխատանք է՝ հրատարակման և արդյունքները կրթական գործընթացում հետագա ներդրման նպատակով: Համալսարանի՝ ԳՀՆ ներկայացնող ստորաբաժանումները, գիտական խմբերը կամ սովորողների խմբերը կազմում են ԳՀՆ-ի գիտական աշխատախումբը (այսուհետ նաև՝ ԳՀՆ գիտաշխատախումբ):
6. Դրամաշնորհների շրջանակներում այլ կազմակերպություններին առնչվող հարաբերությունները կարգավորվում են Համալսարանի կողմից կնքվող պայմանագրերով:
7. Յուրաքանչյուր ԳՀՆ-ի պլանավորումը, հաշվառումը, ֆինանսավորումը և հաշվետվությունը կատարվում է առանձին:

## ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻՆ, ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՑԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

8. Դրամաշնորհների մրցույթին (այսուհետ՝ Մրցույթ) կարող են ներկայացվել կողակտիվ կամ անհատական հայտեր, որոնք կազմվել են Համալսարանի ստորաբաժանումների, գիտական

խմբերի կամ սովորողների խմբերի կողմից: Սովորողների խմբերը պետք է ունենան գիտական ղեկավար Համալսարանի գիտական աստիճան ու/կամ կոչում ունեցող աշխատակիցներից:

9. Յուրաքանչյուր ԳՀՆ-ում կարող է լինել միայն մեկ ղեկավար: Որպես ղեկավար՝ գիտնականը տվյալ Մրցույթին կարող է ներկայացնել միայն մեկ հայտ:

10. Մրցույթին ներկայացվող ԳՀՆ-երը, որոնց վերջնարդյունքը բուհական ձեռնարկներ են, պետք է արտացոլեն Համալսարանում դասավանդվող տվյալ դասընթացի ծրագրի 50 %-ից ավելին:

11. Մրցույթին չի կարող ներկայացվել ԳՀՆ-ի հայտ, որով նախատեսված աշխատանքներն արդեն կատարվում են (լրիվ կամ մասնակի) այլ դրամաշնորհի շրջանակներում:

### **ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

12. Մրցույթը հայտարարվում է և Դրամաշնորհների մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Մրցութային հանձնաժողով) կազմը հաստատվում է Համալսարանի ռեկտորի հրամաններով յուրաքանչյուր տարվա սեպտեմբեր ամսին հաջորդ ֆինանսական տարվա համար:

2017 թ. համար մրցույթը հայտարարվում և Մրցութային հանձնաժողովի կազմը հաստատվում է 2017 թ. ապրիլին:

13. Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Մրցութային հանձնաժողովի կողմից կատարվում է հայտերի փորձաքննությունը:

*2017 թ. հայտերի փորձաքննությունը կատարվում է 2017 թ. ապրիլ – մայիս ամիսներին:*

14. Մրցույթում հաղթած ԳՀՆ-երը ֆինանսավորվում են հաջորդ ֆինանսական տարվա բյուջեից:

*2017 թ. Մրցույթում հաղթած ԳՀՆ-ները ֆինանսավորվում են 2017 թ. ֆինանսական տարվա բյուջեից:*

15. Դրամաշնորհի շրջանակներում ֆինանսավորման չափը, բնագավառները և յուրաքանչյուր բնագավառում ֆինանսավորվող ծրագրերի քանակը հաստատվում են Համալսարանի ռեկտորի հրամանով՝ Համալսարանի զարգացման գերակայություններին համապատասխան:

16. Մրցույթի վերաբերյալ տրվում է հայտարարություն, որում նշվում են գիտության բնագավառը, ԳՀՆ-ի համար նախատեսված առավելագույն գումարի չափը, ժամկետները և ըստ անհրաժեշտության՝ այլ տեղեկություններ:

17. Մրցույթի հայտարարության տեքստը տեղադրվում է Համալսարանի կայքէջում:

18. Հայտերը ներկայացվում են Համալսարանի ընդհանուր բաժին՝ գործավարության կարգին համապատասխան և Կարգով սահմանված ձևաթղթերով (հավելվածներ 1-6):

19. ԳՀՆ-երը ֆինանսավորվում են հետևյալ ձևաչափերով և չափաբաժիններով.

1) գիտական մենագրություն – դրամաշնորհի առավելագույն չափը՝ 4 (չորս) միլիոն ՀՀ դրամ, ոչ պակաս 3 անձից կազմված ԳՀՆ գիտաշխատախումբ (առնվազն մեկ հեղինակ, մեկ խմբագիր և մեկ սրբագրիչ), ծավալը՝ 3 տպագրական մամուլից ոչ պակաս,

2) ներբուհական դասագիրք – դրամաշնորհի առավելագույն չափը՝ 3 (երեք) միլիոն ՀՀ դրամ, ոչ պակաս 3 անձից կազմված ԳՀՆ գիտաշխատախումբ (առնվազն մեկ հեղինակ, մեկ խմբագիր և մեկ սրբագրիչ), ծավալը՝ 3 տպագրական մամուլից ոչ պակաս,

3) ուսումնական ձեռնարկ – դրամաշնորհի առավելագույն չափը՝ 3 (երեք) միլիոն ՀՀ դրամ, ոչ պակաս 3 անձից կազմված ԳՀՆ գիտաշխատախումբ (առնվազն մեկ հեղինակ, մեկ խմբագիր և մեկ սրբագրիչ), ծավալը՝ 3 տպագրական մամուլից ոչ պակաս,

4) ուսումնամեթոդական կամ գիտական գրականության թարգմանություն – դրամաշնորհի առավելագույն չափը՝ 2 (երկու) միլիոն ՀՀ դրամ, ոչ պակաս 3 անձից կազմված ԳՀՆ գիտաշխատախումբ (առնվազն մեկ հեղինակ, մեկ խմբագիր և մեկ սրբագրիչ), ծավալը՝ 3 տպագրական մամուլից ոչ պակաս,

5) սովորողների ԳՀՆ – դրամաշնորհի առավելագույն չափը՝ 1 (մեկ) միլիոն ՀՀ դրամ, ոչ պակաս 3 անձից կազմված ԳՀՆ գիտաշխատախումբ (Ղեկավար և առնվազն երկու սովորող), ծավալը՝ 1 տպագրական մամուլից ոչ պակաս:

20. Մրցույթը կազմակերպվում է՝ ըստ հետևյալ հայտերի՝

1) գիտական կոչում և/կամ աստիճան ունեցող աշխատակիցների կողմից կատարվող ԳՀՆ-ի ֆինանսավորման հայտ,

2) գիտական կոչում և/կամ աստիճան ունեցող աշխատակիցների ղեկավարությամբ ԳՀՆ-ի գիտական աշխատախմբի կողմից կատարվող ԳՀՆ-ի ֆինանսավորման հայտ,

3) երկու և ավելի սովորողներից բաղկացած և գիտական կոչում և/կամ աստիճան ունեցող աշխատակցի կողմից ղեկավարվող ԳՀՆ-ի գիտական աշխատախմբի կողմից կատարվող ԳՀՆ-ի ֆինանսավորման հայտ:

21. Հայտերի գնահատման չափանիշներն են՝

1) հետազոտության թեմայի նորույթը,

2) հետազոտության թեմայի տեսական և գործնական նշանակությունը,

3) հետազոտության թեմայի իրականացման նախադրյալները,

4) հայցվող ֆինանսական միջոցների հիմնավորվածությունը,

5) հետազոտության արդյունքների իրացման հնարավորությունը,

6) ԳՀՆ գիտաշխատախմբի ձեռքբերումները:

22. Մրցութային հանձնաժողովն իր նիստերում՝

1) ուսումնասիրում և քննարկում է փորձագետների (հարկ եղած դեպքում՝ նաև ամբիոնի) եզրակացությունները,

2) փորձաքննության արդյունքների հիման վրա քվեարկությամբ հաստատում է մրցույթին մասնակցելու թույլատրված ԳՀՆ-ների ցանկը:

## ԳՀՆ-Ի ՂԵԿԱՎԱՐԸ

23. ԳՀՆ-ի ղեկավար (այսուհետ՝ Ղեկավար) է համարվում ԳՀՆ գիտաշխատախմբի ղեկավարը:

24. Ղեկավարն ապահովում է՝

- 1) ԳՀՆ-ի գործողությունների պլանի, ուղեկցող և հաշվետվության փաստաթղթերի՝ ժամանակին նախապատրաստումը,
- 2) ԳՀՆ-ի գիտական աշխատախմբի ձևավորումը և ԳՀՆ-ի կատարողներից կատարված աշխատանքների ընդունումը,
- 3) կատարված աշխատանքի ծավալին համապատասխան աշխատավարձի չափի մասին զեկուցագրի ներկայացումը,
- 4) ԳՀՆ-ի կատարումը՝ համաձայն օրացուցային պլանի,
- 5) ՀՀ իրավական ակտերի, Համալսարանի կանոնադրության և ներքին կանոնակարգերի պահանջների, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության կանոնների պահպանումը:

25. Ղեկավարն իրավունք ունի՝

- 1) ինքնուրույն ձևավորելու աշխատանքային խումբ, որում կարող են ընդգրկվել պրոֆեսորադասախոսական, ուսումնական անձնակազմի, օժանդակ ստորաբաժանումների աշխատակիցներ, ասպիրանտներ, հայցորդներ, մագիստրանտներ, այլ գիտնականներ,
- 2) փոխելու ԳՀՆ գիտաշխատախմբի անդամներին, եթե նրանք ժամանակին և որակով չեն կատարում աշխատանքը,
- 3) կազմակերպելու ԳՀՆ գիտական աշխատախմբի աշխատանքը, տալու անհատական առաջադրանքներ՝ իրենց կատարման ժամկետով,
- 4) որոշելու ԳՀՆ գիտաշխատախմբի աշխատակիցների վարձատրության չափը՝ ըստ նախապես ներկայացված ֆինանսական հիմնավորվածության՝ հաշվի առնելով նաև ԳՀՆ-ի կատարման ընթացքը, աշխատանքի կատարման որակը, ծավալը (քանակը) և բարդությունը:

26. Ղեկավարը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակի վերջին հաջորդող աշխատանքային օրը ներկայացնել կատարողական հաշվետվություն Համալսարանի ռեկտորին: Հաշվետվության մեջ հստակ նշվում են կատարված աշխատանքի ծավալները, կատարողների անունները և վճարվելիք գումարների չափերը՝ համաձայն նախապես ներկայացված ԳՀՆ-ի ֆինանսական հիմնավորվածության:

27. ԳՀՆ-ի Ղեկավարի ներկայացմամբ Համալսարանի ռեկտորը հրամանագրում է ԳՀՆ-ի անդամներին:

28. Ղեկավարը պատասխանատու է՝

- 1) ԳՀՆ-ի իրականացման եռամսյակային հաշվետվությունների ներկայացման համար,

2) գիտական հետազոտությունների ցածր մակարդակի, բացթողումների, իր պարտականությունների անբարեխիղճ կատարման համար,

3) ԳՀՆ-ի արդյունքներով տրամադրվող տեղեկատվության հավաստիության, աշխատանքի կատարման նպատակով տրամադրած գումարների նպատակային օգտագործման համար:

**29.** Կարգի և/կամ ՀՀ իրավական ակտերի պահանջները խախտելու դեպքում Համալսարանի ռեկտորն իրավունք ունի ԳՀՆ-ի ղեկավարի հետ կնքած պայմանագրի դրույթներին համապատասխան կարգով դադարեցնելու ծրագրի ընթացքը:

### **ՀԱՅՏԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

**30.** Դիմումների ընդունման ժամկետի ավարտից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Մրցութային հանձնաժողովը քննարկում է հայտերը և կազմում Մրցութի թույլատրված ԳՀՆ-ների ցանկը:

31. Տեխնիկական ստուգման արդյունքում հայտը հետ է վերադարձվում, եթե այն.

1) լրացված է ոչ ճիշտ կամ ոչ ամբողջությամբ,

2) նախկինում նույն Ղեկավարի կողմից իրականացված գիտական թեմայի վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացվել և ծրագիրը չի հասցվել վերջնաարդյունքին,

3) ամբողջությամբ կամ մասամբ կրկնում է այլ ԳՀՆ գիտաշխատախմբի կողմից նախկինում իրականացված կամ ներկայումս իրականացվող բազային կամ թեմատիկ որևէ ծրագիր:

**32.** Մրցութին թույլատրված ԳՀՆ-ները հինգ աշխատանքային օրվա ընթացքում Մրցութային հանձնաժողովն ուղարկում է անկախ փորձագետների, որոնք եզրակացություն պետք է տան տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

33. Գիտական փորձաքննության նպատակը ներկայացված ԳՀՆ-ի գիտական և գիտատեխնիկական նորույթի, տեսական և գործնական նշանակության, գիտության տվյալ բնագավառում հետազոտական խմբի ձեռքբերումների և թեման իրականացնելու համար նրանց մասնագիտական որակավորման համապատասխանության գնահատումն է: Գնահատվում են նաև թեմայի իրականացման նախադրյալները, փուլերը և ժամկետները, պահանջվող ֆինանսական միջոցների հիմնավորվածությունը և գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններով պայմանավորված այլ դրույթներ:

34. Փորձաքննության համար ներգրավվում են երկու անկախ փորձագետներ, որոնք այլ գիտաուսումնական կազմակերպություններից են, և որոնց հետ կնքվում են պայմանագրեր:

35. Գիտական փորձաքննության ժամանակ յուրաքանչյուր հայտի համար փորձագետներից յուրաքանչյուրը լրացնում է գնահատման թերթիկը՝ պատասխանելով դրանում առաջադրված բոլոր հարցերին՝ ըստ թիվ 7 հավելվածի, և կից ներկայացնում է գնահատման տեքստային տարբերակը:

36. Փորձագետների կարծիքների խիստ անհամապատասխանության դեպքում (10 և ավելի միավոր) 3-րդ կարծիքը տալիս է Համալսարանի համապատասխան ամբիոնը:

## **ԴՐԱՄԱՇԱՆՈՐՀԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ**

37. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը փորձագետների գնահատականների միջին թվաբանականն է: Հայտը ֆինանսավորման ենթակա է, եթե վերջնական գնահատականը առնվազն 23 միավոր է:

38. Հայտերի գիտական փորձաքննության վերջնաժամկետը լրանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Մրցութային հանձնաժողովը հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման սանդղակի կիրառմամբ ձևավորում է Մրցույթի մասնակիցների վարկանիշային ցանկը և քվեարկությամբ հաստատում Մրցույթի հաղթողներին:

39. Փորձագետներն ու Մրցութային հանձնաժողովի անդամները հայտերի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի վերաբերյալ տեղեկություններ չեն հրապարակում:

40. Համալսարանի ռեկտորը Մրցութային հանձնաժողովի ներկայացրած ԳՀՆ-ների ղեկավարների հետ 10-օրյա ժամկետում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքում է «Գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման մասին» պայմանագրեր և ԳՀՆ-ները հրամանագրում է ֆինանսավորման:

41. Մրցույթի արդյունքները հրապարակվում են Համալսարանի պաշտոնական կայքում:

42. Մրցույթին ներկայացված նյութերը չեն վերադարձվում և պահպանվում են Մրցութային հանձնաժողովի նախագահի մոտ, իսկ Դրամաշնորհի աշխատանքների ավարտից հետո հանձնվում են Համալսարանի արխիվ:

## **ԳԻՏԱՇԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

43. Գիտահետազոտական գործունեության արդյունքները ենթակա են քննարկման Համալսարանի գիտական խորհրդում տարեկան առնվազն մեկ անգամ:

44. Յուրաքանչյուր եռամսյակի վերջում Ղեկավարը հաշվետվություն է ներկայացնում համապատասխան ամբիոնի՝ Համալսարանի գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորի մասնակցությամբ նիստում, որտեղ քննարկվում է ԳՀՆ-ի մասնագիտական որակի հարցը և գրավոր առաջարկ է ներկայացվում Համալսարանի ռեկտորին՝ ԳՀՆ-ի աշխատանքները շարունակելու կամ դադարեցնելու վերաբերյալ:

45. Աշխատանքի եզրափակիչ փուլի ավարտից հետո ԳՀՆ-ի արդյունքները ընդունում է Մրցութային հանձնաժողովը՝ ամբիոնի նիստի դրական եզրակացության դեպքում: Այդ դեպքում Մրցութային հանձնաժողովը դիմում է Համալսարանի գիտական խորհրդին՝ ԳՀՆ արդյունքը տպագրության ներկայացնելու առաջարկով:

46. Թեմայի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները պետք է հրատարակվեն ՀՀ ԿԳՆ ԲՈՀ-ի կողմից սահմանված ցանկում ընդգրկված գիտական հրատարակություններում, իսկ ուսումնագիտական ձեռնարկները (նախատեսված նաև ուսանողների համար), գիտական մենագրությունները՝ Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

47. Հետազոտությունների արդյունքները հրապարակելիս անհրաժեշտ է նշել Համալսարանի կողմից ստացված աջակցության մասին (Հետազոտությունն իրականացվել է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությամբ՝ ՎՊՀ ներհամալսարանական դրամաշնորհի շրջանակներում):

#### **ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ**

48. Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1102-րդ հոդվածի 1-ին մասի՝ ԳՀՆ-ի շրջանակում կատարված աշխատանքների արդյունքների նկատմամբ անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները պատկանում են հեղինակ(ներ)ին:

49. ԳՀՆ-ի աշխատանքի արդյունքը տպագրում է Ղեկավարը՝ դրամաշնորհի միջոցներով. գիտական մենագրությունները՝ 100 օրինակ, ԳՀՆ-ի աշխատանքի մյուս արդյունքները՝ 50 օրինակ: Ղեկավարը Համալսարանին նվիրում է առնվազն 20 (քսան) գիրք՝ ըստ նախապես կնքված պայմանագրի:

50. ԳՀՆ-ի աշխատանքի արդյունքի գույքային իրավունքը հեղինակի և Համալսարանի ռեկտորի միջև կնքված պայմանագրով լրիվ կամ մասնակիորեն կարող է փոխանցվել նաև Համալսարանին՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1105-րդ հոդվածի: Այդ դեպքում պայմանագրում պետք է ներառվեն օգտագործման բոլոր պայմանները՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1124-րդ և 1125-րդ հոդվածների:

51. ԳՀՆ-ի ղեկավարի կողմից ըստ պայմանագրի Համալսարանին փոխանցված արդյունքները, համաձայն Համալսարանի կանոնադրության, կարող են իրացվել՝ գումարները մուտքագրվելով Համալսարանի բյուջե:



**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

**Հավելված N 1**

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան  
պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտոր Գ. Կ. Խաչատրյանին

նույն համալսարանի

\_\_\_\_\_ամբիոնի

\_\_\_\_\_ (անուն, հայրանուն)

\_\_\_\_\_ -ից  
(ազգանուն)

\_\_\_\_\_ (հասցե)

\_\_\_\_\_ (հեռախոս)

**Դ Ի Մ ՈՒ Մ**

Ձեզ եմ ներկայացնում ներհամալսարանական գիտական դրամաշնորհների մրցույթին  
մասնակցելու

«\_\_\_\_\_»  
\_\_\_\_\_» վերնագրով նախագիծը:

Խնդրում եմ սահմանված կարգով ընթացք տալ:

Դիմող՝ \_\_\_\_\_  
(ստորագրություն)

(\_\_\_\_\_ )  
(անուն, ազգանուն)

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 20\_\_\_\_ թ.

**Հավելված N 2**

**ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՅՑ**

1. Հայտի վերնագիրը (15 բառից ոչ ավելի, հայերենով) \_\_\_\_\_
2. Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը \_\_\_\_\_ տարի
3. Գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը \_\_\_\_\_
4. Հայցվող ընդհանուր գումարը \_\_\_\_\_ հազար դրամ
5. Հայտի ղեկավարի ստորագրությունը \_\_\_\_\_

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 20\_\_\_\_ թ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱՎ

ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Ազգանունը, անունը, հայրանունը \_\_\_\_\_
  2. Ծննդյան տարեթիվը \_\_\_\_\_
  3. Կրթությունը (բուհ, մասնագիտություն) \_\_\_\_\_
  4. Գիտական աստիճանը, կոչումը \_\_\_\_\_
  5. Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը \_\_\_\_\_
  6. Հրատարակված՝
    - գիտական հոդվածներ (թիվը) \_\_\_\_\_
    - մենագրություններ (թիվը) \_\_\_\_\_
  7. Արտոնագրեր (թիվը) \_\_\_\_\_
  8. Լիցենզիաներ (թիվը) \_\_\_\_\_
  9. Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները և մենագրությունները (նշել վերնագիրը, հրատարակչությունը, տարեթիվը, ամսագիրը, հատորը, էջերը)
    - 1) \_\_\_\_\_  
(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)
  10. Ստացված դրամաշնորհները (եթե կան)
    - 1) \_\_\_\_\_  
(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)
- « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ.

<sup>1</sup>Մինչև 5 էջի սահմաններում հայերենով ներկայացնել խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, թեմայի գիտական նպատակները, տվյալ ուղղությամբ խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները ( ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը):

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ**

Ազգանունը, անունը, հայրանունը (հայերեն)	
Ծննդյան տարեթիվը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը	
Աշխատանքի կամ ուսման վայրը, պաշտոնը	
Հեռախոսը	
Էլեկտրոնային հասցեն	
Նախագծին առնչվող հրատարակված գիտական հոդվածները և մենագրությունները (նշել վերնագիրը, հրատարակչությունը, տարեթիվը, ամսագիրը, հատորը, էջերը), 5-ից ոչ ավելի	
1.	
2.	

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ**

h/h	Գործողություն	Փուլերը	Ակնկալվող արդյունքը	Ֆինանսական ռեսուրսների բաշխում	Ժամակացույց
1.					
2.					

**ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՆԴՂԱԿ**

Գնահատման չափանիշները	Թվային գնահատականը՝ միավորներով
1. Ներկայացված հետազոտության թեմայի նորույթը	0-ից 5 միավոր
2. Ներկայացված հետազոտության թեմայի տեսական և գործնական նշանակությունը	0-ից 5 միավոր
3. Հետազոտական խմբի ձեռքբերումները*	0-ից 5 միավոր
4. Թեմայի իրականացման նախադրյալները	0-ից 5 միավոր
5. Հայցվող ֆինանսական միջոցների հիմնավորվածությունը*	0-ից 5 միավոր
6. Հետազոտության արդյունքների իրացման հնարավորությունը	0-ից 5 միավոր
7. Գումարային գնահատական	

\* Սովորողների կողմից կատարվող ԳՀՆ-ի դեպքում հայտը գնահատվում է 5:

**0 միավոր** - հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկության բացակայության պատճառով,

**1 միավոր** - հարցի պատասխանը ներկայացված է մակերեսորեն և անորոշ,

**2 միավոր** - հարցի պատասխանը բավարար չէ ամբողջական կարծիք կազմելու համար,

**3 միավոր** - հարցի պատասխանն, ընդհանուր առմամբ, բավարարում է հարցի պահանջները, բայց կան զգալի անհամապատասխանություններ, որոնք շտկելի են,

**4 միավոր** - հարցի պատասխանը որոշակի վերապահումներով համապատասխանում է առաջադրված պահանջներին,

**5 միավոր** - հարցի պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին և թերություններն աննշան են: